ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/150

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.07.2020թ. թիվ 26/26-1/10147-2020 գրությամբ «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթությանը աջակցող ՀԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 02.07.2020թ. թիվ ՍՄ//42495-2020 գրության հիման վրա, 08.07.2020թ. թիվ 26/26-1/10147-2020 գրությամբ նախաձեռնել է «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթությանը աջակցող ՀԿ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթությանը աջակցող ՀԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթությանը աջակցող ՀԿ-ն 23.07.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների կարիքների համար՝ մասնագիտական ուսուցման ծառայությունների մատուցման նպատակով հայտարարվել է ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20-1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Հայտեր ներկայացնելու համար սահմանվել է 7 օրացուցային օր:

Վերը նշված ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ն:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության գ) կետի համաձայն՝ «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի հայտը մերժվել է հրավերի մաս 3-ով սահմանված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիր չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների կարիքների համար՝ մասնագիտական ուսուցման ծառայությունների մատուցման նպատակով հայտարարված ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20-1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին, սակայն «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է՝ հրավերի մաս 3-ով սահմանված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիր չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

Համաձայն ընթացակարգի հրավերի ՄԱՍ 3-ի՝ ՀՀ կառավարության 17.04.2014թ-ի N 534-Ն որոշման հավելված 11-ի 7, 7.1 և 7.2 կետերով սահմանված պահանջներին համապատասխան՝ Մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերով սահմանվում է, որ բոլոր մասնակիցները հայտով ներկայացնում են նաև մոդուլային ծրագրի նախագիծ, իսկ այն մասնակիցները, որոնք արդեն իսկ ունեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանելու մասին» N 1062-Ն որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետի համաձայն երաշխավորված՝ մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագիր՝ ներկայացնում են այդ ծրագիրը և Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից դրա վերաբերյալ տրված երաշխավորագիրը: Ընդ որում, եթե ծրագիրը երաշխավորված է մինչև հայտը ներկայացնելը, ապա երաշխավորագրի գործողության ժամկետը չպետք է պակաս լինի գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի շրջանակում մատուցվելիք ծառայության վերջնաժամկետից:

Ելնելով վերոհիշյալ պահանջներից՝ գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի մաս 3-ով սահմանված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիր

չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով մերժելով՝ առնվազն գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով մասնակցի մասնակցության իրավունքը:

Մասնավորապես՝ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրելով անհամապատասխանություն 08.06.2020թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է ՀԿ-ին, մասնավորապես նշելով՝

«Հարգելի մասնակից, ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20-1 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հրավերի մաս 3-րդի համապատասխան խնդրում եմ ներկայացնել կրթության և գիտության,սպորտի և մշակույթի հարցերի նախարարության կողմից հաստատված մոդուլային ծրագրերը: 34-րդ և 35-րդ չափաբաժինների մասով ներկայացնել նոր գնայիան առաջարկ»:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության գ) կետի համաձայն՝ «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի հայտը մերժել է հրավերի մաս 3-ով սահմանված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիր չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

Եվ այսպես՝ Գնման ընթացակարգի մասնակցի (մասնակիցների) կողմից ներկայացված մասնագիտական ուսուցման մոդուլային ծրագրի (ծրագրերի) նախագծի փորձաքննության, մասնագիտական եզրակացության և երաշխավորության ստացման գործընթացի ժամկետը դիմումն ստանալու օրվան հաջորդող 15 աշխատանքային օր է, որի ընթացքում կասեցվում է գնման ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման և ընտրված ու հաջորդող տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման գործընթացը:

Այժմ, ըստ հերթականության.

ա) 08.06.2020թ. գնահատող հանձնաժողովի կողմից ստացվել է ծանուցում, համաձայն որի՝ գնահատող հանձնաժողովը հայտնել է հետևյալը. ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20-1 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հրավերի մաս 3-րդի համապատասխան խնդրում եմ ներկայացնել կրթության և գիտության,սպորտի և մշակույթի հարցերի նախարարության կողմից հաստատված մոդուլային ծրագրերը:

Հիմք ընդունելով վերը նշված ծանուցումը՝ «Գործընկերություն և ուսուցում»

քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ն 24.03.2020թ. ՀՀ ԿԳՄՍ նախարար Ա. Հարությունյանին է ներկայացնում մոդուլային ծրագիրը:

Արդյունքում, երբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի մաս 3-ով սահմանված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիր չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով մերժելով՝ ստեղծում է մի իրավիճակ, երբ կարծես թե այդ մոդուլային ծրագրի հաստատումը կախված է եղել «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի գործողություններից կամ անգործությունից, այնինչ ՀԿ-ն ստանալով ծանուցումը՝ ծանոթացել և կազմել համապատասխան գրությունը՝ և ուղարկել այն ՀՀ ԿԳՄՍ նախարարություն:

Մինչդեռ մոդուլային ծրագրի ուշ ներկայացման պատճառները ընդհանրապես կապված չեն «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի կողմից թույլ տրված անգործությամբ, այլ մեր կարծիքով ՀՀ-ում տիրող արտակարգ դրությամբ է միայն պայմանավորված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ուշացումով մոդուլային ծրագրի հաստատումը և ներկայացումը:

Հետևաբար Մասնակցի վրա դրված պարտավորությունների ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել ՀՀ ԿԳՄՍ նախարարության և Պատվիրատուի անգործության արդյունքում, վերջինս է նպաստել Մասնակցի կողմից պարտավորությունները չկատարելուն և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկվել դրանց նվազեցման համար:

բ) Հատկանշական է նաև այն փաստական հանգամանքը, որ շտկման մասին ծանուցման մեջ չի նշվել ոչ այն ժամանակահատվածը և վերջնաժամկետը, որի ընթացքում և մինչև երբ պետք է կատարվեր շտկումը, և այն, թե ինչ էլեկտրոնային հասցեին պետք է ուղարկվեր կատարված շտկումը, ինչպես դա պահանջում է գնումների մասին ՀՀ օրենսդրությունը:

գ) Գտնում ենք, որ «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի հայտը ընդհանրապես սխալ հիմքով է մերժվել:

Մասնավորապես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ

հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գնահատող հանձնաժողովը մերժել է «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի հայտը՝ Հրավերի մաս 3-ով սահմանված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիրը չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ նշված ժամանակահատվածի համար մասնակցից շտկում չի պահանջվել: Ինչ վերաբերում է 15 աշխատանքային օրյա ժամանակահատվածին /որը նախատեսված է Հրավերի ՄԱՍ 3-ով/, ապա գնահատող հանձնաժողովը նշված ժամանակահատվածի մասին նշելիս, ըստ երևույթի, նկատի է ունեցել Հրավերի 3-րդ մասով սահմանված պահանջը, որի համաձայն՝ գնման ընթացակարգի մասնակցի (մասնակիցների) կողմից ներկայացված մասնագիտական ուսուցման մոդուլային ծրագրի (ծրագրերի) նախագծի փորձաքննության, մասնագիտական եզրակացության և երաշխավորության ստացման գործընթացի ժամկետը դիմումն ստանալու օրվան հաջորդող 15 աշխատանքային օր է, որի ընթացքում կասեցվում է գնման ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման և ընտրված ու հաջորդող տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման գործընթացը:

Վերոհիշյալ պահանջի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ այստեղ խոսքը գնում է ինչ-որ դիմումի մասին, որը կարելի է տարբեր կերպ ընկալել, այդ թվում նաև որպես մասնակցի դիմումը ուղղված ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը: Մինչդեռ գնահատող հանձնաժողովը «դիմում» բառը նույնացրել է գնահատող հանձնաժողովի ուղարկված ծանուցման հետ (ինչը միանշանակ նույն կատեգորիան չէ), և 15 աշխատանքային օրյա ժամկետի սկիզբ է ընդունել ՀԿ-ին ուղարկված ծանուցումը, ինչը ուղղակիորեն նախատեսված չէ հրավերով: Ուստի և այս հիմքով «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի հայտը չէր կարող մերժվել»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/150 ընթացակարգի շրջանակներում 20.07.2020թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.07.2020թ. թիվ ՍՄ//42495-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպված ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20-1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 17.04.2014թ-ի N 534-Ն որոշման հավելված 11-ի 7, 7.1 և 7.2 կետերով սահմանված պահանջները, նախատեսվել է, որ բոլոր մասնակիցները հայտով ներկայացնում են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանելու մասին» N 1062-Ն որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետի համաձայն երաշխավորված՝ մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագիր և Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից դրա վերաբերյալ տրված երաշխավորագիրը: Ընդ որում, եթե ծրագիրը երաշխավորված է մինչև հայտը ներկայացնելը, ապա երաշխավորագրի գործողության ժամկետը չպետք է պակաս լինի գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի շրջանակում մատուցվելիք ծառայության վերջնաժամկետից:

Հաշվի առնելով վերոնշյալ որոշման պահանջները, հրավերով սահմանվել է նաև, որ գնման ընթացակարգի մասնակցի (մասնակիցների) կողմից երաշխավորված մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագիր չներկայացվելու դեպքում գնման ընթացակարգին ներկայացված գնման հայտերի գնահատումը կասեցվում է 15 աշխատանքային օրով, որի ընթացքում երաշխավորված մոդուլային ծրագրի չներկայացման պարագայում մասնակցի հայտը մերժվում է:

Գնման ընթացակարգի շրջանակներում գնման հայտ ներկայացրած 15 մասնակիցներից 1-ը՝ «Գործընկերություն և ուսուցում Քաղաքացիական Հասարակությանը և Կրթությանը Աջակցող» հասարակական կազմակեպությունը, «երաշխավորված մոդուլային ծրագրեր չի ներկայացրել և 08.06.2020թ. գնման ընթացակարգի գնահատումը կասեցվել է 15 աշխատանքային օրով՝ մինչև 29.06.2020թ.: Միևնույն ժամանակ վերոնշյալ մասնակցին էլեկտրոնային փոստի միջոցով 08.06.2020թ.-ին ուղարկվել է ծանուցում, առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունները և հրավերով սահմանված ժամկետում ներկայացնել երաշխավորված մոդուլային ծրագրերը: Սակայն վերոնշյալ մասնակիցը հրավերով սահմանված ժամկետում շտկում չի ներկայացրել»:

Ամփոփելով՝ Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով վերոգրյալը, վերոնշյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացնում է ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20-1 ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի փաթեթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/150 ընթացակարգի շրջանակներում 20.07.2020թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/150 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/150 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել

է ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20-1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթությանը աջակցող ՀԿ-ն:

2. Պատվիրատուն 08.06.2020թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով Ընթացակարգի հրավերի 3-րդ մասին համապատասխան ներկայացնել կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված մոդուլային ծրագիրը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.06.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել Ընթացակարգի հրավերի 3-րդ մասով սահմանված՝ ՀՀԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիրը:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.07.2020թ. թիվ 26/26-1/10147-2020 գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 02.07.2020թ. թիվ ՍՄ//42495-2020 գրությունը և կից փաստաթղթերը, Ընկերության կողմից 23.07.2020թ. ներկայացված դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտը ներառում է մասնակցի հաստատած՝ հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

«Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին ՀՀ կառավարության 17.04.2014թ. N 534-Ն որոշման հավելված 11-ի 7-րդ, 7.1-րդ և 7.2-րդ կետերի համաձայն՝

7. ***<u>Մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերով սահմանվում է, որ բոլոր մասնակիցները հայտով ներկայացնում են նաև մոդուլային ծրագրի նախագիծ</u>***, իսկ այն մասնակիցները, որոնք արդեն իսկ ունեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանելու մասին» N 1062-Ն որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետի համաձայն երաշխավորված՝ մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագիր՝ ներկայացնում են այդ ծրագիրը և Հայաստանի Հանրապետության կրթության

պետական կառավարման լիազորված մարմնի կողմից դրա վերաբերյալ տրված երաշխավորագիրը: Ընդ որում, եթե ծրագիրը երաշխավորված է մինչև հայտը ներկայացնելը, ապա երաշխավորագրի գործողության ժամկետը չպետք է պակաս լինի գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի շրջանակում մատուցվելիք ծառայության վերջնաժամկետից:

7.1 Սույն կարգի 7-րդ կետով սահմանված մասնագիտական ուսուցման մոդուլային ծրագիրը Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորվում է երեք տարի ժամկետով՝ անկախ դրա իրականացման քանակից: Երաշխավորման համար հիմք է հանդիսանում մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթին դիմած մասնակցի (մասնակիցների) կողմից ներկայացրած մասնագիտական ուսուցման մոդուլային ծրագրի նախագիծը:

7.2 ***Գնման ընթացակարգի մասնակցի (մասնակիցների) կողմից ներկայացված մասնագիտական ուսուցման մոդուլային ծրագրի (ծրագրերի) նախագծի փորձաքննության, մասնագիտական եզրակացության և երաշխավորության ստացման գործընթացի ժամկետը դիմումն ստանալու օրվան հաջորդող <u>15 աշխատանքային օր է, որի ընթացքում կասեցվում է գնման ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման և ընտրված ու հաջորդող տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման գործընթացը:</u>***

Ընթացակարգի հրավերի 3-րդ մասի՝ մասնակցի կողմից մոդուլային ծրագրի ներկայացման հրահանգի համաձայն՝ ՀՀ կառավարության 17.04.2014թ-ի N 534-Ն որոշման հավելված 11-ի 7, 7.1 և 7.2 կետերով սահմանված պահանջներին համապատասխան՝

-Մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերով սահմանվում է, որ բոլոր մասնակիցները հայտով ներկայացնում են նաև մոդուլային ծրագրի նախագիծ, իսկ այն մասնակիցները, որոնք արդեն իսկ ունեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանելու մասին» N 1062-Ն որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետի համաձայն երաշխավորված՝

մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագիր՝ ներկայացնում են այդ ծրագիրը և Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից դրա վերաբերյալ տրված երաշխավորագիրը: Ընդ որում, եթե ծրագիրը երաշխավորված է մինչև հայտը ներկայացնելը, ապա երաշխավորագրի գործողության ժամկետը չպետք է պակաս լինի գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի շրջանակում մատուցվելիք ծառայության վերջնաժամկետից:

- կարգի 7-րդ կետով սահմանված մասնագիտական ուսուցման մոդուլային ծրագիրը Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորվում է երեք տարի ժամկետով՝ անկախ դրա իրականացման քանակից: Երաշխավորման համար հիմք է հանդիսանում մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթին դիմած մասնակցի (մասնակիցների) կողմից ներկայացրած մասնագիտական ուսուցման մոդուլային ծրագրի նախագիծը:

-Գնման ընթացակարգի մասնակցի (մասնակիցների) կողմից ներկայացված մասնագիտական ուսուցման մոդուլային ծրագրի (ծրագրերի) նախագծի փորձաքննության, մասնագիտական եզրակացության և երաշխավորության ստացման գործընթացի ժամկետը դիմում հայտարարություն ստանալու օրվան հաջորդող ***<u>15 աշխատանքային օր է, որի ընթացքում կասեցվում է գնման ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման և ընտրված ու հաջորդող տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման գործընթացը:</u>***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***<u>ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***<u>եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>***, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20-1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթությանը աջակցող ՀԿ-ն:

Պատվիրատուն 08.06.2020թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով Ընթացակարգի հրավերի 3-րդ մասին համապատասխան ներկայացնել կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված մոդուլային ծրագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.06.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել Ընթացակարգի հրավերի 3-րդ մասով սահմանված՝ ՀՀԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիրը:

Այսպիսով, ուսումնասիրելով ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20-1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, արձանագրում եմ հետևյալը.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 3-րդ մասով սահմանված պահանջը, այն է՝_Գնման ընթացակարգի մասնակցի (մասնակիցների) կողմից ներկայացված մասնագիտական ուսուցման մոդուլային ծրագրի (ծրագրերի) նախագծի փորձաքննության, մասնագիտական եզրակացության և երաշխավորության ստացման գործընթացի ժամկետը դիմում հայտարարություն ստանալու օրվան հաջորդող ***15 աշխատանքային օր է, որի ընթացքում կասեցվում է գնման ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման և ընտրված ու հաջորդող տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման գործընթացը***, կասեցրել է հայտերի գնահատման և ընտրված ու հաջորդող տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման գործընթացը և 08.06.2020թ. ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով Ընթացակարգի հրավերի 3-րդ մասին համապատասխան ներկայացնել կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված մոդուլային ծրագիրը:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.06.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել Ընթացակարգի հրավերի 3-րդ մասով սահմանված՝ ՀՀԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիրը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում նշել, որ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում՝ ***<u>Կարգի 42-րդ կետով սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Մինչդեռ՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից Ընկերության հայտը մերժվել է Ընթացակարգի հրավերի 3-րդ մասով նախատեսված ժամկետում մոդուլային ծրագիրը չներկայացնելու հիմքով, այն պայմաններում երբ կարգի 42-րդ կետով հստակ սահմանվում է, որ Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում շտկում չիրականացնելու պայմաններում է մասնակցի հայտը ենթակա մերժման:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից չի կիրառվել Կարգի 41-րդ և 42-րդ կետերով սահմանված պահանջները, հետևաբար գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթությանը աջակցող ՀԿ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, ուստիև գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.07.2020թ. թիվ 26/26-1/10147-2020 գրությամբ «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթությանը աջակցող ՀԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**